ցին՝ խոստանայ բերել զհրովարտակս · այլ նա խորհէր կոչել 'ի միասին զերկու ազգսն և խաղաղութեամբ վճարել զիրան։ Սակայն անդէն անդ եհաս դուժկան 'ի Բեթ-զեհէմէ՝ թէ Լատինք սաստկացուցին զվէճն և անարգեցին զԹադաւորն եւ զԴատաւորն, և դառն լուտանօք վարեցան ընդ Հայս։ Լուեալ Քաղաքապետին զայսոսիկ՝ գրեաց առ քրիստոնեայս և առ այլազգիս Բեթզեհէմի չիշխել ումեք նեղել զՀայս՝ և բառնալ ինչ յեկեղեցւոյ անտի թելադրութեամբ այլոց, որք կարգաւորեալ են հրամանաւ Արքայի, եւ անհնազանդից սպառնալիք պատժոյ։ Իբրեւ եկն Թարգմանն Լատինաց, յանդիմանեաց զնա վասն անկարգութեանցն, և սպառնայր գրել և ծանուցանել Բըզեչլին զյանդգնութիւնս և զանհնազանդութիւնս նոցա, և կամ մնալ խնդրոյն 'ի վերայ առաջի պայմանին, մինչեւ ինքնին երթիցէ անդ և կարգաւորեսցէ։ Զի յորժամ եկեղեցին այն գիտութեամբ ամենեցուն և ձեր յանձն եղեւ Հայոց, ընդէ՞ր ոչ ասացիք ինչ · եւ ոչ շատացեալ ճանապարհին սահմանելոյ, այլ իմն ճանապարհ կամիք որոշել այժմ ըստ կամաց ձերոց և անցանել անտի Ֆէլլահ ժողովրդովք, և թէ որո՞վ իշխանութեամբ գործէք զայդ խօսելով զայլ և այլ բանս ընդդէմ Տէրութեան։ Եւ Թարգմանն չկարացեալ ասել ինչ՝ մատոյց նմա զերկուս հրովարտակս · առաջին գրեալ 'ի Թուին Հիճրէթի ١١٠١ յորում պատմէ զվէճս Ցունաց ընդ Լատինաց վասն կանթեղաց և պատկերաց Բեթզեհէմի եկեղեցւոյն, և սուտ հանէ զդաշնագիրն Օմարայ, որ 'ի ձեռս Ցունաց։ Եւ երկրորդն ١٢٢٥ յորում պատուիրէ չլինել ումեք ձեռնամուխ տեղեաց Լատինաց։ Որոց պատասխանին արարին Հայք չլինիլ 'ի նոսա յիշատակութիւն ճանապարհին այնորիկ · և մին հրովարտակաց հին, յորում ժամանակի եկեղեցին Բեթզեհէմի էր 'ի ձեռս Լատինաց, յորոց առին Ցոյնք, և 'ի վերջոյ ըստ հրովարտակին Սէլիմայ բաժանորդ եղեն ընդ նոսա Հայք, այլ մեք ասեն չեմք քննող հրովարտակաց, և ոչ ունիմք վէճս ընդ ումեք, միայն Լատինք պատճառանօք մի հակառակեսցին մեզ։ Քաղաքապետն յօժար էր յառաջագոյն գնալ 'ի Բեթզեհէմ, այլ 'ի վերջոյ մնալ ասէր մինչ ցգալուստ նոր Դատաւորի · զի օրինօք վճա-